



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, 0236 6-13-18 noramarghamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունվարի 2014թվականի N 3

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ
ՀԱՇՎԵԿՇԻՌ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԼ ՎԱՅՐԻՑ ՀԱՄԱՐԺԵՔ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Քաղաքացի Վազգեն Աղջոյանը դիմել է գյուղապետարան դրենաժային ջրերի մակարդակի բարձրացման հետևանքով իր սեփականաշնորհված 7200քառ.մ. հողամասի/ծածկագիր/03-068-0356-010/ ճահճացման և հողամասում գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու անհնարինության ու աննպատակահարմարության պատճառով սեփականաշնորհված հողամասը համայնքի հաշվեկշիռ վերցնելու և այլ վայրից 7200քառ.մ. հողամաս սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու խնդրանքով.

Ուսումնասիրությունից պարզվել է, որ իրոք նշված հողամասը խիստ ճահճացած է և հողամասում գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելը անհնար և աննպատակահարմար է.

Հիմք ընդունելով քաղ.Վազգեն Աղջոյանի դիմումը.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 38-րդ հոդվածի պահանջներով. համայնքի ավագանի որոշում է.

1,Թույլատրել համայնքի ղեկավարին.

1)Քաղաքացի Վազգեն Աղջոյանի սեփականաշնորհված /ճահճացած և գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու համար ոչ-պիտանի/7200քառ.մ հողամասը/ծածկագիր 03-068-0356-010/ վերցնել համայնքի հողային հաշվեկշիռ.

2)Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասից/ծածկագիր 03-068-0313/ առանձնացնելու 7200քառ.մ հողատարածք և այն որպես սեփականություն անհատույց քաղ.Վազգեն Աղջոյանին տրամադրելու նպատակով.

Կողմ -5

Դեմ -0

Չեղծակալի -0

1. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ

2. ԹՈՐՈՍՅԱՆ ՍՈՒՐՄԻ

3. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ

4. ՂԱԶՐԱՄԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՄԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար

ՄԱՐԳԻՍ ԳԱԼՍՅԱՆ

